



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mba.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2025 թվականի N 0315-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱՂՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2008 թվականի հունիսի 03-ի թիվ 333-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի, Երևանյան փողոցի թիվ 4 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 5,52 քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Լեոնիկ Բաղդյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Լեոնիկ Բաղդյանի միջև 2008 թվականի հոկտեմբերի 08-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 5281/:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 750-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի, Երևանյան փողոց, թիվ 4 տաղավար հասցեում գտնվող 5,52 քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը երկարացվել է մինչև 08.10.2024 թվականը, համաձայն որի Արմավիրի համայնքապետարանի և Լեոնիկ Բաղդյանի միջև 2020 թվականի մարտի 05-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ /սեղ. նո 1061/:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 30-ի թիվ 341-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի, Երևանյան փողոց, թիվ 4 հողամասին կից՝ Երևանյան փողոց, թիվ 4/3 ժամանակավոր հասցեում գտնող 5,52 քմ հողամասը կառուցապատման իրավունքով՝ ընդլայնման նպատակով 2 (երկու) տարի ժամկետով տրամադրվել է Լեոնիկ Բաղդյանին, համաձայն որի Արմավիրի համայնքապետարանի և Լեոնիկ Բաղդյանի միջև 2022 թվականի ապրիլի 08-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 2663/:

Քաղաքացի Լեոնիկ Հակոբի Բաղդյանի մահից հետո /մահացած՝ 07.08.2023թ./ ընդհանուր համատեղ սեփականության հիմքով հաստատվել են Անահիտ Բաբկենի Գևորգյանի սեփականության իրավունքները՝ Արմավիր քաղաքի, Երևանյան փողոց, թիվ 4 և Երևանյան փողոց, թիվ 4/3 հասցեներում գտնվող հողամասերի 1/2 (մեկ կոտորակ երկու) մասերի նկատմամբ /հիմք՝ սեփականության իրավունքի վկայագիր՝ գրանցամատյան N 1505/, և ժառանգներ են ճանաչվել դուստրեր՝ Իրինա Լեոնիկի Բաղդյանը և Մարիետա Լեոնիկի Հովհաննիսյանը 1/4 (մեկ կոտորակ չորս) մասերի նկատմամբ /հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր՝ գրանցամատյան N 1507 և 1506/, տրված՝ 2024 թվականի մարտի 22-ին ՀՀ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտարի կողմից/:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 25-ի թիվ 0070-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի, Երևանյան փողոց, թիվ 4 և 4/3 հասցեներին տրվել է միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Երևանյան փողոց, 18/4:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի գործողության ժամկետները լրացել են:

Իրավատերերը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել են իրենց՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 201-րդ, 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, 1222-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական

լարոյթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր՝ գրանցամատյան N 1507, 1506/, սեփականության իրավունքի վկայագիր՝ գրանցամատյան N 1505/ ՀՀ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտարի կողմից՝ 2024 թվականի մարտի 22-ին, Արմավիրի քաղաքային համայնքի և Լեռնիկ Բաղոյանի միջև 2008 թվականի հոկտեմբերի 08-ին և 2022 թվականի ապրիլի 08-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի 9.1 կետերը, և ընդառաջելով քաղաքացի Իրինա Լեռնիկի Բաղոյանի 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 1095 դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Լեռնիկ Բաղոյանի միջև 2008 թվականի հոկտեմբերի 08-ին և 2022 թվականի ապրիլի 08-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերում /սեղ. նո 5281/ և /սեղ նո 2663/ կատարել փոփոխություններ.
  - 1) Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի գործողության ժամկետներն երկարացնել մինչև 08.10.2030 թվականը:
  - 2) Պայմանագրերում՝ կառուցապատման իրավունք ունեցող անձ՝ «Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Երևանյան փողոց, 18 շենք, 2 բնակարանի բնակիչ՝ Լեռնիկ Հակոբի Բաղոյան» բառերի փոխարեն կարդալ՝ «Անահիտ Բաբկենի Գևորգյան, ծնված՝ 27.09.1948թ., հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Երևանյան փողոց, 18 շենք, 2 բնակարան, Մարիետա Լեռնիկի Հովհաննիսյան, ծնված՝ 10.04.1974թ., հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Երևանյան փողոց, 18 շենք, 16 բնակարան, Իրինա Լեռնիկի Բաղոյան, ծնված՝ 11.08.1979թ., հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Երևանյան փողոց, 18 շենք, 2 բնակարան» բառերը:
  - 3) Պայմանագրերի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «16560 (տասնվեց հազար հինգ հարյուր վաթսուն)» և «55200 (հիսունհինգ հազար երկու հարյուր)» բառերի փոխարեն կարդալ՝ «132480 (մեկ հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր ութսուն)» բառերը:
2. Իրավաբանական բաժնին՝ իրավատերեր Իրինա Լեռնիկի Բաղոյանի, Մարիետա Լեռնիկի Հովհաննիսյանի և Անահիտ Բաբկենի Գևորգյանի հետ համատեղ կնքել համաձայնագրեր՝ 2008 թվականի հոկտեմբերի 08-ին /սեղ. նո 5281/ և 2022 թվականի ապրիլի 08-ին/սեղ. նո 2663/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին:
  3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 Փետրվարի 2025 թվականի N 0316-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ՏԻՄԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը և Ա/Ձ Շմավոն Խաչատրյանի հայտը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Շմավոն Խաչատրյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փ. 1/3 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Շմավոն Խաչատրյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. Փետրվարի 27  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, armarir.armarir@mba.gos.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2025 թվականի N 0317-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2014 թվականի օգոստոսի 13-ի թիվ 458-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի, Չարենցի փողոց, թիվ 81/1 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 6,0 (վեց) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Հովհաննես Քեսիմյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Հովհաննես Քեսիմյանի միջև 2014 թվականի սեպտեմբերի 01-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 4797/:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2019 թվականի օգոստոսի 06-ի թիվ 401-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի, Չարենցի փողոց, թիվ 81/1 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 6,0 քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը երկարացվել է մինչև 01.09.2024 թվականը, համաձայն որի Արմավիրի համայնքապետարանի և քաղաքացի Հովհաննես Քեսիմյանի միջև 2019 թվականի օգոստոսի 07-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ /սեղ. նո 5582/:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Քաղաքացի Հովհաննես Քեսիմյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և Հովհաննես Քեսիմյանի միջև 2014 թվականի սեպտեմբերի 01-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետը և ընդառաջելով քաղաքացի Հովհաննես Քեսիմյանի 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 0931 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Հովհաննես Քեսիմյանի միջև 2014 թվականի սեպտեմբերի 01-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրում՝ /սեղ. նո 4797/ կատարել փոփոխություններ.
  - 1) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 01.09.2030 թվականը:
  - 2) Պայմանագրի 1.1 կետում «5000 (հինգ հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:
  - 3) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «30000 (երեսուն հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «72000 (յոթանասուներկու հազար)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ քաղաքացի Հովհաննես Սարգսի Քեսիմյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2014 թվականի սեպտեմբերի 01-ին՝ /սեղ. նո 4797/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



2025թ. սեպտեմբերի 22  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 Փետրվարի 2025 թվականի N 0318-Ա

### ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը և Ա/Ձ Արրահամ Սարգսյանի հայտը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Արրահամ Սարգսյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, 5 փ., 1 զ. 1-ին հարկում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Արրահամ Սարգսյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



2025թ. Փետրվարի 27  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 Փետրվարի 2025 թվականի N 0319-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ՄԻԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը և Ա/Ձ Հասմիկ Ստեփանյանի հայտը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել Ա/Ձ Հասմիկ Ստեփանյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Լեւոնտով փ. 30 հասցեում գտնվող հիմնական շինությունում գրադվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:
2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Հասմիկ Ստեփանյանին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



2025թ. Փետրվարի 27  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 Մարտի 2025 թվականի N 0320-Ա

### 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «Համայնքի տարածքում հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն տալու կարգը սահմանելու մասին» թիվ 962-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Դավիթ Էքիզյանի հայտը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Բավարարել Ա/Ձ Դավիթ Էքիզյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Երևանյան փ, 15/3 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվել հանրային սննդի կազմակերպումով 24:00-ից հետո :
2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին՝ Ա/Ձ Դավիթ Էքիզյանին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. Մարտի 03  
ք. Արմավիր

  
 **Գ. ԱՄՐԳՍՅԱՆ**





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2025 թվականի N 0321-Ա

### ԹԱՄԱՐԱ ԱՎԵՏԻՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Թամարա Ավետիսի Սարգսյանի 11.02.2025թ. թիվ 0859 դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թամարա Ավետիսի Սարգսյանի (ծնվ. 11/10/1952թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող գույքին (կադաստրային ծածկագիր՝ 04-043-0844-0070) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 1-ին փողոց, 47 հողամաս:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

  Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մարտի 03  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2025 թվականի N 0322-Ա

### ՄԱՐԻՆԵ ՎԱՐՂԵՎԱՐԻ ԲԱԼՅԱՆԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՈՐԴՈՒՆ՝ ԱՐՄԵՆ ԱՐՄԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԲԱԺՆԵՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Չարենցի փողոց 32 շենքի 1 բնակարանի բնակիչ Մարինե Վարդևարի Բալյանի՝ Արմավիրի համայնքապետարան մուտքագրված 2025 թվականի փետրվարի 19-ի թիվ 1002 դիմումը և Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 20-ի թիվ 02 նիստի արձանագրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- 1.Թույլատրել Մարինե Վարդևարի Բալյանին /ծնված 29.01.1986թ./ օտարելու իր անչափահաս որդուն՝ Արմեն Արմանի Նազարյանին /ծնված 23.08.2011թ./ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով հասանելիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Չարենցի փողոց 32 շենք 1 բնակարան հասցեում գտնվող, 04-001-0051-0112-032-001 կադաստրային ծածկագրով, 43,8 քմ մակերեսով բնակարանի 1/4 բաժնային մասը:
- 2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մարտի 03  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0323-Ա

### ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱԿԵՂՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Հայրապետ Մակեղոնի Հարությունյան 19.02.2025թ. թիվ 1010 դիմումը՝

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայրապետ Մակեղոնի Հարությունյանին (ծնվ. 15/06/1965թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող գույքին (սեփականության վկայական թիվ 038832) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Հյուսիսային թաղամասի 3-րդ փողոց, 27 հողամաս:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մարտի 04  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0324-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1323-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Հացիկ, 16 փողոց, 32 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Հայկ Կորյունի Հովհաննիսյանի 27.02.2025 թվականի թիվ 1148 դիմումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով Հայկ Կորյունի Հովհաննիսյանին (ծնվ. 27.10.1975թ.), Հայկանուշ Հայկի Իսրաբեյանին (ծնվ. 01.10.1953թ.) և Կորյուն Կառլենի

Հովհաննիսյանին (ծնվ. 16.04.1950թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Հացիկ 04-058-0044-0045 կադաստրային ծածկագրում գտնվող 0.0945 հա օրինական հողամասի վրա կառուցված 62,1 քմ ներքին և 75,0 քմ արտաքին մակերեսով խանութը, 55,2 քմ մակերեսով ներքին և 66,3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 60,3 քմ ներքին և 79,7 քմ արտաքին մակերեսով սառնարանը ,1,3 քմ ներքին և արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, իսկ ծածկոցները, զուգարանը, ծխարանները և պարիսպը համարել ինքնակամ:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ինքնակամ հառուցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին >> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 75,0 քմ մակերեսով ինքնակամ բնակելի շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 1748 ՀՀ դրամ ընդհանուր՝ 131100 (մեկ հարյուր երեսունմեկ հազար հարյուր ) ՀՀ դրամ, ընդհանուր արտաքին 79,7 քմ մակերեսով ինքնակամ բնակելի շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 15-ապատիկի չափով՝ 1311 ՀՀ դրամ ընդհանուր՝ 104487 (մեկ հարյուր չորս հազար չորս հարյուր ութսունյոթ ) ՀՀ դրամ և ընդհանուր արտաքին 67,6 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524,4 ՀՀ դրամ ընդհանուր՝ 35450 (երեսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ընդամենը՝ 271037 (երկու հարյուր յոթանասունմեկ հազար երեսունյոթ) ՀՀ դրամ:

4. Ուժը կորցրած ճանաչել ինքնակամ կառույցն օրինականացնելու 2024 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1323-Ա որոշումը:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

2025թ. մարտի 05  
ք. Արմավիր



**Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0325-Ա

### ԽԱԶԻԿ ՌԱԶՄԻԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Խաչիկ Ռազմիկի Սողոմոնյանի լիազորված անձ Աննա Միքայելի Մկրտչյանի 21.02.2025թ. թիվ 1064 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Խաչիկ Ռազմիկի Սողոմոնյանին (ծնվ. 15/10/1974թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող գույքին (կադաստրային ծածկագիր թիվ 04-059-0013-0016) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ, Խ. Աբովյան փողոց, 3 հողամաս:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մարտի 05  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2025 թվականի N 0326-Ա

### ՍԵՅՐԱՆ ԹԵՄՈՒՐԻ ԲՐՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, ըստ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2024թ վճիռը և Սեյրան Թեմուրի Բրոյանի 20.02.2025թ. թիվ 1043 դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սեյրան Թեմուրի Բրոյանին (ծնվ. 06/07/1952թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող գույքին (կադաստրային ծածկագիր 04-016-0028-0014) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Արաքս, 3 թաղամասի 4-րդ փողոց, 27 հողամաս:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի քյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մարտի 05  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0327-Ա

### ՄԵԼԱՆՅԱ ՆԻԿԱՏԻՄՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ 17 ՀՈՒՆՎԱՐԻ N 0103-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Մելանյա Նիկատիմոսի Խաչատրյանի 29.01.2025թ. թիվ 0587 դիմումը՝

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մելանյա Նիկատիմոսի Խաչատրյանին (ծնվ. 20/10/1959թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող գույքին (սեփականության վկայական թիվ 28062024-04-0094) տալ նշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Այգեգործական 3-րդ թաղամասի 3-րդ փողոց, 12 հողամաս:

2. Ուժը կորցրած ճանաչել 2025 թվականի 17 հունվարի N 0103-Ա

3. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մարտի 05  
ք. Արմավիր







# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2025 թվականի N 0328-Ա

### ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԽԼԴԱԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԷԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի ,29-րդ ,33-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Արման Սամվելի Խլղայանի 25.02.25թ. թիվ 1114 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արման Սամվելի Խլղայանին (ծնվ՝ 19/10/1983թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր Ս. Շևչենկոյի փողոց, 18 բնակելի տան (սեփականության վկայականի N 07022025-04-0071) հասցեյում գտնվող 0.0291 հա մասին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր Ս. Շևչենկոյի փողոց, 18/1 բնակելի տուն, իսկ 0.0292 հա հասցեն թողնել նույնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր Ս. Շևչենկոյի փողոց, 18 բնակելի տուն:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման :

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

2025թ. մարտի 05  
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2025 թվականի N 0329-Ա.

### ՍԱՐՈ ԱՎԵՏԻՔԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Սարո Ավետիքի Ծատուրյանի 28.02.2025թ. թիվ 1181 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սարո Ավետիքի Ծատուրյանին (ծնվ. 23/12/1959թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող գույքին (սեփականության վկայական թիվ 1999719) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, 3-րդ փողոց, 33/1 հողամաս:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ



2025թ. մարտի 05  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0330-Ա

### ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Լևոն Մկրտչյանի 09.04.2024թ. թիվ 2245 դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի քաղաք Արմավիր Երևանյան փողոց 4/3 հասցեում գտնվող անշարժ գույքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27022019-04-0029 վկայական) զբաղեցրած տարածքի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին և հաշվի առնելով այն, որ ընդլայնման նպատակով, լրացուցիչ տրամադրման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի քաղաք Արմավիր Երևանյան փողոց 4/19 հասցեում գտնվող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09122024-04-0022 վկայական) փաստացի մակերեսը կազմում է 71.1 քմ մակերես, որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 102-Ն որոշմամբ հաստատված Արմավիր համայնքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Երևանյան փողոց 4/3 հասցեին կից քաղաք Արմավիր Երևանյան փողոց 4/19 հասցեում գտնվող 71.1 քմ մակերեսով հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային գնի չափով 1քմ-ը 1221.0 ՀՀ դրամարժեքով՝ ընդամենը 86813 /ութանասունվեց հազար ութ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամով օտարել (վաճառել) Լևոն Մկրտչյանին:

3. Ընդհանուր գույքին տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր Երևանյան փողոց 4/19:

4. Լիազորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարի անունից, հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

5. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռքբերողի կողմից 15-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքին պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՎԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. մարտի 06  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 Մարտի 2025 թվականի N 0331-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ՆԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը և Ա/Ձ Վահագն Բաղդասարյանի հայտը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Վահագն Բաղդասարյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փ. 204 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Վահագն Բաղդասարյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. Մարտի 06  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 Մարտի 2025 թվականի N 0332-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ՝ «ԱՐՄԱՎԻՐ» ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1617-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը, Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշումը և «Արմավիր Ֆրույթ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Մանուկյանի 05.03.2025 թվականի թիվ 1263 դիմումը՝ որ

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Հայկ Մանուկյանի դիմումը և թույլատրել Արմավիր համայնքի խորհրդանիշը՝ «Արմավիր» անվանումը «Արմավիր Ֆրույթ» ՍՊԸ-ի անվանման մեջ օգտագործելու համար:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին՝ «Արմավիր Ֆրույթ» ՍՊԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման և հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. Մարտի 06  
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 Մարտի 2025 թվականի N 0333-Ա

### 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «Համայնքի տարածքում հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն տալու կարգը սահմանելու մասին» թիվ 962-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Լուսինե Պապյանի հայտը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.Բավարարել Ա/Ձ Լուսինե Պապյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր Երևանյան փ. 2 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվել գվարճանքի կազմակերպումով 24:00-ից հետո :
- 2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Լուսինե Պապյանին տալու համապատասխան թույլտվություն:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. մարտի 10  
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0334-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԵՆՈՔՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 2024 թվականի մայիսի 24-ին, Քաջիկ Հարությունի Ենոքյանի 03.01.2025թ. թիվ 0001 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 04-059-0027-0004 կադաստրային ծածկագրով կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաջիկ Հարությունի Ենոքյանին /ծնված 08.02.1948թ./ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող



04-059-0027-0004 կադաստրային ծածկագրով 900,0 քմ մակերեսով հողամասին կից ավել գրադեցրած 137,0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց:

2.Վերականգնել Քաջիկ Հարությանի ենոքյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարգարապատ գյուղում գտնվող 04-059-0027-0004 կադաստրային ծածկագրով 1037,0 քմ մակերեսով օրինական հողամասի վրա 1941թ. և 1960թ. կառուցված 83,5 քմ մակերեսով բնակելի տան,1980թ. կառուցված 15,0 քմ մակերեսով օժանդակ շինության, 1985թ. կառուցված 14,0 քմ մակերեսով անասնաշենքի և 1985թ. կառուցված 13,0 քմ մակերեսով ծածկի նկատմամբ, իսկ 2010թ. կառուցված 1,7 քմ մակերեսով օժանդակ շինությունը համարել ինքնակամ:

### 3.Ընդունելի գիտություն, որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Քաջիկ Հարությանի ենոքյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարգարապատ գյուղում 04-059-0027-0004 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարգարապատ, 2-րդ փողոց,8/1:

5. Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1451-Ա որոշումը:

6.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. մարտի 10

ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0335-Ա

### ՔԱՂԱՔԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՂՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ԱՎԵԼ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Հայրապետ Կարապետի Աղուրյանի 20.02.2025թ. թիվ 1047 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հայրապետ Կարապետի Աղուրյանին (ծնվ. 00.00.1966թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Լուկաշին, Ա. Թամանյան փողոց, 5-րդ նրբանցք, 2/1 հասցեում գտնվող 04-047-0056-0002 կադաստրային ծածկագրով 1200 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 139,0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:
- Հայրապետ Կարապետի Աղուրյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Լուկաշին, Ա. Թամանյան փողոց, 5-րդ նրբանցք, 2/1 հողամաս:
- Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ

վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի ) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

 **Կ. ՄԱՐԳՍՅԱՆ**

2025թ. մարտի 10  
ք. Արմավիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0336-Ա

### ՔԱՂԱՔԱՅԻ ՀՐԱՀԱՏ ԿԱՌԼԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ՆԱԶԻԿ ԶՈՆԻԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՏԱԹԵՎԻԿ ՀՐԱՀԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ԱՎԵԼ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Հրահատ Պողոսյանի լիազորված անձ Հայկ Պողոսյանի 20.02.2025թ. թիվ 1034 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հրահատ Կառլենի Պողոսյանին (ծնվ. 23/12/1956թ.), Նազիկ Զոնիկի Ալեքսանյանին (ծնվ. 31/01/1967թ.) և Տաթևիկ Հրահատի Հովհաննիսյանին (ծնվ. 28/08/1990թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ, 04-059-0120-0019 կադաստրային ծածկագրում գտնվող 1000 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 114 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:
2. Հրահատ Կառլենի Պողոսյանին, Նազիկ Զոնիկի Ալեքսանյանին և Տաթևիկ Հրահատի Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ, 28-րդ փողոց, 28 հողամաս:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց և

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի քյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

2025թ. մարտի 10  
ք. Արմավիր



**Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ  
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0337-Ա

**ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉԻ  
ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
